

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «1992 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի՝ ՆԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

28 հունիսի 2011թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Նովհաննիսյանի (նախագահող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՆ արտաքին գործերի նախարարի տեղակալ Շ. Զոչարյանի,

համաձայն Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված՝ «1992 թվականի մայիսի 15-ի՝ Նավաքական անվտանգության մասին պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 06.05.2011թ. ՏՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հեղափոխելով քննության առարկա արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Արձանագրությունն ստորագրվել է 2010թ. դեկտեմբերի 10-ին Մոսկվայում՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության շրջանակներում համագործակցության զարգացման նպատակով:

2. Արձանագրությամբ փոփոխություններ եւ լրացումներ են կատարվում Հավաքական անվտանգության մասին պայմանագրի հոդվածներում, խմբագրվում են որոշ դրույթներ:

3. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- փոփոխել Պայմանագրի որոշ հոդվածներ,
- ՏԱՊԿ մեկ կամ մի քանի անդամ պետությունների անվտանգության, կայունության, փարաժքային ամբողջականության եւ ինքնիշխանության սպառնալիքի ի հայտ գալու կամ միջազգային խաղաղության եւ անվտանգության սպառնալիքի դեպքում անհապաղ գործի դնել համապեղ խորհրդակցության մեխանիզմը՝ իրենց դիրքորոշումները համակարգելու նպատակով, ինչպես նաեւ մշակել եւ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել անդամ պետություններին օգնություն ցուցաբերելու համար՝ սպառնալիքի վտանգի վերացման նպատակով,

- ՏԱՊԿ անդամ պետություններից որեւէ մեկի ագրեսիայի ենթարկվելու պարագայում դա համարել որպես ագրեսիա Հայաստանի Հանրապետության դեմ,

- ՏԱՊԿ անդամ ցանկացած պետության դեմ ագրեսիա իրականացվելու դեպքում, արվյալ պետության խնդրանքով, փրամադրել անհապաղ անհրաժեշտ օգնություն, ներառյալ՝ ռազմական, ինչպես նաեւ իր փրամադրության ներքո գտնվող բոլոր միջոցներով աջակցել հավաքական անվտանգության իրավունքի իրականացմանը՝ ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածին համապատասխան, եւ ձեռնարկված միջոցների մասին անհապաղ փեղյակ պահել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին,

• հավաքական անվտանգության համակարգի ուժի եւ միջոցների կիրառումն անդամ պետությունների փարաձքից դուրս իրականացնել ելնելով բացառապես միջազգային անվտանգության շահերից՝ ՄԱԿ-ի Կանոնադրության եւ Պայմանագրի անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

4. Արձանագրությամբ սահմանված են նաեւ դրա ուժի մեջ մտնելու կարգն ու պայմանները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2010 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված՝ «1992 թվականի մայիսի 15-ի՝ Նավաքական անվտանգության մասին պայմանագրում փոփոխություններ կարարելու մասին» արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՎՈՂ

Վ. ՆՈՎՆԱՆՆԻՍՅԱՆ

28 հունիսի 2011 թվականի
ՄՂՈ-981